

Թիւ 29086
Օգոստոս 22, 1985

Արժանաշնորհ
Տ. Զաւէն Բնյ, Արզումանեան
Հովիւ Հարաւային ֆլորիսայ Հայ Եկեղեցւոյ
ֆլորիսա.

Սիրելի Տէր Զաւէն,

Ստացած ենք Օգոստոս 12, 1985 թուակիր ձեր նամակը:

Ուրախ ենք որ եկեղեցաշինութեան ծրագրումները յաջող կերպով յառաջ
կը տարուին: Անդամական ժողովի որոշումը պիտի հաստատենք՝ Առաջնորդարա-
նի ժարտարապետական Տանձնախումբի թելադրութիւնները ստանալէ յետոյ, ո-
րոնց մասին ձեզ եւս տեղեակ կը պահենք:

Մինաս Մալումեանի համար Հայրապետական Կոնդակի խնդրանքը արդէն
իսկ ներկայացուած էր Ս. Սրբորդութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին կող-
մէ, եւ մենք այդ խնդրանքը փոխանցած ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Երբ յիշեալ Կոնդակը ստանանք կը տեղեկացնենք ձեզի:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ